



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

28 հուլիսի 2011թ. թիվ 379

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2011թ. հուլիսի 7-ի թիվ 1DC92-95E2-3A4B գրությունը՝

Կ ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Մ եմ.

1. «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի բժիշկ Արտակ Քոչարյանի ղիմում-բողոքում բարձրացված հարցերն ուսումնասիրելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

20-օրյա ժամկետում ավարտել ուսումնասիրությունը և ներկայացնել տեղեկատվություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

*A. Քոչարյան*

Ա.ԴԱՐԲԻՆՅԱՆ

2011թ. հուլիսի 28  
ք.Վանաձոր